դերերում և իր խելացի ու մտածուած խաղով ազդել հանդիսատեսների վրա։ Վերջին տարիներս Տիկինը իր բեպերտուարի մէջ մտցրել է նաև Համլէտը։ Այս դերում նա ունի հաւանողների և չհաւանողների մեծ բանակ։ Հաւատում ենք, որ վաստակաւոր դերձիչներին հասարակութիւնը կիմանայ վարձատրել։

ԱՆՏԵՂԻ ՉՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Ի 17 հոկտեմբերի 1908 ամի. ըստ հրամանի ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆԲՆԱԿԱՎԻՆ ամենայն Ռուսաց ի Լուսաւորչական Հայոց Սինոդի Սրբոյ Էջմիածնի լուսն զգեկուցումն. յ19-րդ համարի ի 25 յունուարի տարւոյս «Վտակ» լրագրի տպեալ էր յօդուած մի՝ ի Գեառնի Բասարայ Վ. Դասպարեան ստորագրութեամբ, որ ինչ զկնի-«Նորերս մեռաւ Աղբաչում վերաբնակուած Մախսուդ Իսահակեանի կինը. հրաւիրեցին Տէր Արտաշէսին ննջեցեալին թաղելու համար։ Վերջինս 5 ռ. աշխատավարձ պահանջեց, այն ինչ սովորական վարձը միայն 1 ռուբլի է։ Որովհետև յիշեալ Մախսուդը վերջին ծայր աղքատութեան մէջ է, ուստի չէր կարող վճարել այդ գումարը։ Մի քանի երիտասարդներ հաւաքեցին 3 ռ. և առաջարկեցին տէր հօրը, բայց Արտաշէս քահանայն հաստատ էր իր որոշման վերայ՝ ննջեցեալին 5 ռ. թաղել։ Այդ բոլորից յետոյ ննջեցեալին առանց քահանայի, առանց եկեղեցական ծիսակատարութեան տարան և թաղեցին։ Ասենք—դա մի մեծ ցաւ էլ չի, բայց դէպքը շատ բնորոշ է մեր ֆարաջաւորների անհատնում ընչաքաղցութեան տեսակէտից»։ Դատաստանական մասն Սինոդիս յ30 յունուարի տարւոյս, թ. 246, զվերոգրեալսն տալով գիտել Կոնսիստորիային Երևանայ, առաջադրէ տրօրինել օրինական կարգաւ ստուգել զիրակութիւն յօդուածոյն զարարմանց Արտաշէս քահանային և զարդիւնս քննութեան եզրակացութեամբ հանդերձ առաջի առնել Սինոդիս։ Ի կատարումն այսորիկ

Կոնսիստորիայն ընդ յայտարարութեան ի 14 յուլիսի տարւոյս, թ. 2860, առաջի առնէ զքննական գործն, որոյ տեղեկութիւնք ճշմիւ ցուցեալ են ի յայտարարութեանն, որ ինչ զկնի. «Ըստ վկայութեանց չորից անձանց Մախսուդն Իսահակեան ասորի յազգէ լեալ է յունադաւան և ի վախճանելն նորա հրաւիրեալ են զԱրտաշէս քահանայն տէր Դաւթեան ի թաղել զնա, սակայն քաջ գիտացեալ քահանայն եթէ հանգուցեալն ունէր զսեփական ռուս քահանայ, մերժեալ է կատարել զկարգ թաղման հանգուրելոյն առանց թոյլտուութեան ծխատէր քահանայի նորա, սակայն բարեկամք հանգուցելոյն ըստ պահանջման Արտաշէս քահանայի ոչ ցանկացեալ ստանալ զյանձնարարական թուղթ ի ծխատեառնէն վասն թաղելոյ նորա զմեռեալն, ինքեանք առանց քահանայի և առանց կատարման կարգի թաղման, բարձեալ են զնա և եդեալ ի գերեզմանի։ Բացատրութիւն Արտաշէս քահանայի է ի նոյն միտս։ Սահմանեցին. ի կատարումն վերոյիշեալ առաջադրութեան մատուցմամբ քննական գործոյ Կոնսիստորիայիս զվերոգրեալսն յայտ առնել ի տնօրէնութիւն ս. Մինասեանց ս. Էջմիածնի յարակցելով եթէ լրատուութիւն յօդուածագրի ի «Վտակ» օրաթերթի չհամապատասխանի ճշմարտութիւն»։— ՀՐԱՄԱՅԵՑԻՆ. Քանզի որպէս երևի յառաջի արարեալ քննութենէն ամբաստանութիւն զԱրտաշիսէ քահանայէ տէր Դաւթեան ոչ հաստատի, ուստի զքահանայն ճանաչել անպարտ և զգործս ի Մինասիս կարճել։ Զվճռոյս տալ տեղեկութիւն Կոնսիստորիային Երևանայ։